

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՁՈՐԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ Ձորամուտ համայնքի ավագանու 22.12.2016թ. թիվ31-Ն որոշմամբ

ՁՈՐԱՄՈՒՏ 2016թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....	10
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	11
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 12	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	12
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	<b>Error! Bookmark not defined.</b>
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....	16
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	16
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....	16
4. ՀԶԾ ֆինանսավորում .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5. ՀԶԾ մոնիթորինգ .....	<b>Error! Bookmark not defined.</b>

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

### Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Ձորամուտ համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորամուտ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի շրջանակներում նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

- Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝
- ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,
  - բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,
  - գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ձորամուտ համայնքում ընդգրկված են երկու բնակավայրեր՝ Ձորամուտ և Գոգավան: Նախկինում այդ գյուղերը կոչվել են համապատասխանաբար՝ Էվլու և Դեմուրչիյար, որոնք հիմնվել են 1890թ. աղբբեջանցիների կողմից: Գյուղերը միմյանցից 2.5կմ հեռավորության վրա են գտնվում: Հայտնի դեպքերից հետո բնակություն են հաստատել Աղբբեջանից բռնագաղթվածներ և վիրահայեր:

Համայնքը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, ծովի մակերևույթից 1600-1700 մ բարձրության վրա: Վարչական տարածքը 5.81 քառ.կմ է, հեռավորությունը մարզկենտրոնից 60 կմ է, իսկ նախկին շրջկենտրոնից /Տաշիր/ 10կմ է ու սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Նորաշեն, Միխայլովկա և Մեծավան գյուղական համայնքներին: Ռելիեֆը թմբային է, կտրտված ձորակներով և փոքրիկ հեղեղատներով: Կլիման բարեխառն է, երկարատև տաք ամառներով և ցուրտ ձմեռներով:

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 373 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 188 և կանայք՝ 185 : Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան - 36 մարդ
- 7-17 տարեկան – 92 մարդ
- 18-62 տարեկան – 213 մարդ
- 63 և ավելի տարեկան – 32 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 32
- հաշմանդամներ - 12 մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 2 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 2 մարդ
- աշխատունակներ – 210 մարդ
- զբաղվածներ – 170 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 114
- առկա ընտանիքների թիվը - 90
- նպաստառու ընտանիքների թիվը - 24

որից՝

1. Ձորամուտ գյուղում առկա բնակչության թիվը կազմում է 321 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 158 և կանայք՝ 163 : Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան - 32 մարդ
- 7-17 տարեկան – 77 մարդ

- 18-62 տարեկան – 184 մարդ
- 63 և ավելի տարեկան – 28 մարդ
- կենսաթոշակատուների թիվը – 32
- հաշմանդամներ -12 մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 2 մարդ
- միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 2 մարդ
- աշխատունակներ – 180 մարդ
- զբաղվածներ – 155 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 102
- առկա ընտանիքների թիվը – 82
- նպաստառու ընտանիքների թիվը - 19

2.Գոգավան գյուղում առկա բնակչության թիվը կազմում է 52 մարդ, այդ թվում

տղամարդիկ՝ 30 և կանայք՝ 22 : Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -4 մարդ
- 7-17 տարեկան – 15 մարդ
- 18-62 տարեկան – 29 մարդ
- 63 և ավելի տարեկան – 4 մարդ
- կենսաթոշակատուների թիվը –6
- հաշմանդամներ -0
- միակողմանի ծնողագուրկ երեխաներ- 0
- աշխատունակներ – 40 մարդ
- զբաղվածներ – 15 մարդ
- տնային տնտեսությունների թիվը –12
- առկա ընտանիքների թիվը -10
- նպաստառու ընտանիքների թիվը - 5

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Համայնքի սեփականություն համարվող գույքն ունի հետևյալ ցանկն ու վիճակը.

- մշակույթի տուն , որի շենքում տեղակայված են նաև համայնքի գյուղապետարանը, բուժկետը և համայնքային հանդիսությունների սրահը,ունի վերանորոգման կարիք,
- ջրամատակարարման ներհամայնքային համակարգ՝ խմելու ջրի ջրագծեր /Չորամուտում կառուցվել է 2009թ.՝ վիճակը բավարար է,իսկ Գոգավանում՝ 2016թ./
- ներհամայնքային նշանակության փողոցներ և ճանապարհներ, որոնք ունեն բարեկարգման և/կամ ասֆալտապատման կարիք,
- գերեզմանատուն՝ 1 հատ, ցանկապատված է:

## **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն):

Չորամուտ գյուղի ներհամայնքային խմելու ջրագիծը կառուցվել է 2009թ. „Հայաստան,, համահայկական հիմնադրամի միջոցներով և գտնվում է բավարար վիճակում : Յուրաքանչյուր տնային տնտեսություն ապահովված է բավարար քանակությամբ ջրով և օգտվում են հաշվիչներից: Խմելու ջրով ապահովված են նաև համայնքի դպրոցը:

Գոգավան գյուղը չունի ներքին խմելու ջրագիծ: Բնակչությունը օգտվում էր արտաքին աղբյուրներից: „Գոգավան,, մաքսակետը խմելու ջրով ապահովելու համար գյուղի միջով անցկացվել է ջրագիծ, որի արդյունքում 2016թ. ընթացքում բնակիչները ևս ապահովվել են ջրով:

Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի):

2014 թվականին անցկացվել է գազատար մինչև գյուղերի սկիզբը: Սակայն, համայնքի բնակչությունը և դպրոցն առայժմ կապույտ վառելիքից չեն օգտվում: Համայնքի ամբողջական գազաֆիկացումը մեծապես կնպաստի բնակչության կենցաղային խնդիրների լուծմանը: Համայնքի գազաֆիկացման ներքին ցանցն անցկացնելու դեպքում նրա երկարությունը կկազմի մոտ 5 կմ:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է մասնակիորեն՝ համայնքի սուղ միջոցներով: Համայնքը չունի աղբատար մեքենա, առանձին հատկացված աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի մաքրության վրա:

Համայնքում կա 1 գերեզմանատուն, որի ցանկապատումը ավարտվեց այս տարի:

## **ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան, իսկ բնակելի առանձնատների քանակը 114 է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 15000 քմ: Առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունի, իսկ նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ չեն կառուցվում:

## **ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

Համայնքի վարչական տարածքը կազմում է 773 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 594.36 հա,
- բնակելի ֆոնդի հողեր – 52.24 հա,

- բնապահպանական նշանակության հողեր – 0.75 հա,
- անտառային և ջրային ֆոնդերի հողեր – 72.63 հա,
- արդյունաբերական նշանակության հողեր – 6.27 հա,
- էներգետիկայի ենթակառուցվածքների հողեր – 2.33 հա:

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի բոլոր տնային տնտեսությունները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 1.93 հա, այդ թվում 1.01 հա-ը՝ վարելահող (տնամերձի հետ միասին), 0.92 հա-ը՝ խոտհարք:

Համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 280.04 հա, որոնցից 158.74 հա վարելահող է, 121.30 հա՝ խոտհարք:

### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվում են խոտհարքների :

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 421, այդ թվում կով՝ 168, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը 20: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի մի քանի տնային տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում աճեցնում են նաև կարտոֆիլ, բանջարաբուստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Կաթը կանխիկ գումարով հանձնվում է Տաշիր քաղաքի պանրագործարաններին:

### **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է Տաշիրի անտառտնտեսության կողմից: Անտառտնտեսության կողմից սանիտարական հատումներ չեն կատարվում նոսր լինելու պատճառով:

Համայնքի տնային տնտեսություններն իրենց արտադրած կենցաղային աղբն անթույլատրելիորեն թափում են այնտեղ, որտեղ հարմար են գտնում: Այդ ուղղությամբ կարիք



կա լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության շրջանում՝ գերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից: Համայնքն իր ուժերով ի վիճակի չէ լուծելու աղբավայրի հարցը և աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել միջհամայնքային համագործակցություն տարածաշրջանի այլ համայնքների հետ:

## **ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 7 կմ: Մայրուղուց մինչև Ձորամուտ գյուղ 1կմ ճանապարհը ասֆալտապատվել է դեռ խորհրդային ժամանակներում և այժմ ունի վերանորոգման կարիք: Ինչպես նաև ընդհանուր պրոֆիլից ցածր լինելու պատճառով այն ձմռանը քամիներից փակվում է , առաջանում են դժվարություններ տրանսպորտի համար և կապը շրջապատի հետ կտրվում է: Մնացած 6 կմ- ոց մասը կազմում են ներհամայնքային փողոցները, որոնք կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման: Ներհամայնքային ճանապարհները և փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ, արտաքին (գիշերային) լուսավորության համակարգ:

Համայնքից մինչև մոտակա շուկա (քաղաք Տաշիր) ճանապարհի երկարությունը կազմում է 10 կմ, այն քանդված վիճակում է և լուրջ դժվարություններ է առաջացնում:

Համայնքում շահագործվում է 23 մարդատար և 3 բեռնատար մասնավոր ավտոմեքենա: Կա նաև մասնավոր 7 տրակտոր, որից 1-ը թրթուրավոր է, իսկ 6-ը՝ անիվավոր: Համայնքը որպես սեփականություն տրանսպորտային միջոցներ չունի:

Համայնքի տարածքում կա նաև 4 փոքր կամրջակ, որոնք գտնվում են համայնքով անցնող գետակների վրա:

Համայնքում չկա կենցաղսպասարկման և ծառայությունների ոչ մի օբյեկտ:

## **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 67 աշակերտ: Այն գործում է Ձորամուտում: Դպրոցը ունի մեկ միկրոավտոբուս աշակերտներին երկու գյուղեր տեղափոխելու համար: Դպրոցում աշխատում է 20 աշխատող, որոնցից 15-ը մանկավարժ է: Դպրոցի շենք առաջին հարկը վերանորոգված է և ներկայում գտնվում է բարվոք վիճակում: Մպորտդահլիճը ունի կապիտալ վերանորոգման կարիք: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է վառելիքայտով: Դպրոցի շենքը ներկայումս կարիք ունի միայն ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, դռների ու պատուհանների, սանհանգույցների փոխարինման և ջրահեռացման համակարգի (կոյուղու) կապիտալ նորոգման:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի տան դահլիճը ունի ընթացիկ վերանորոգման կարիք: Ներկայումս մշակութային կյանքը համայնքում անբավարար վիճակում է: Դահլիճից մեկ- մեկ օգտվում է դպրոցը՝ մեծ միջոցառումների համար: Մշակույթի տան բացակայությունն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

Համայնքի գրադարանային ֆոնդը ավագանու որոշումով հանձնվեց դպրոցին:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է բուժկետ որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետը տեղակայված է համայնքի մշակույթի տան շենքում, բարվոք վիճակում է, ապահովված է խմելու ջրի ջրամատակարարմամբ, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով:

Համայնքում գործում է երեխաների խաղահրապարակը և ֆուտբոլի դաշտը որից օգտվում են համայնքի երիտասարդները:

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի կենտրոնում կառուցված է նարդու, շախմատի, դոմինոյի խաղերի համար նախատեսված շինություն, որտեղ հիմնականում իրենց ժամանակն են անցկացնում բնակիչները:

### 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 8.5 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 4.7 մլն դրամ (55%),
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	7 հա	55 տ
կաղամբ	0,18հա	1տ
բանջարեղեն	1հա	5տ
միս		10տ
մեղր		1տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	421
Այդ թվում կովեր	168
Մանր եղջերավոր անասուններ	20
Այդ թվում մայրեր	17
խոզեր	11
Այդ թվում մայրեր	4
թռչուններ	362
Այդ թվում հավեր	280
մեղվաընտանիքներ	47

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 67 աշակերտ:

Դպրոցն ունի 20 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժկետ:
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 24 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 30%:

### 2.3. Համայնքում իրականացվելիք ծրագրերը

- Համայնքի ամբողջական գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը, կփրկի համայնքի անտառային ֆոնդը ոչնչացումից
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Համայնքային նոր կենտրոնի շենքի կառուցման դեպքում հնարավորություն կստեղծվի՝ համայնքի գյուղապետարանին ազատելու մշակույթի տան շենքում զբաղեցրած տարածքները և տեղափոխվելու նոր շենք՝ ավելի ընդարձակ և հարմարավետ պայմաններով, և ընդլայնելու, ամբողջական ու լիարժեք դարձնելու բնակչության մշակութային կյանքը և ժամանցը:

**2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները**

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	8.5 մլն	8.8 մլն	9.1 մլն	9.4 մլն	9.8 մլն
~Ք	Հարկային եկամուտներ	4.7 մլն	4.8 մլն	4.9 մլն	4.9 մլն	5.0 մլն
1	Հողի հարկ	2.3 մլն	2.3 մլն	2.3 մլն	2.3 մլն	2.3 մլն
2	Գույքահարկ	1.3 մլն	1.4 մլն	1.5 մլն	1.5 մլն	1.6 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	260 հազ	260 հազ	260 հազ	260 հազ	260 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	800 հազ	800 հազ	820 հազ	850 հազ	850 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	3.8 մլն	4.0 մլն	4.2 մլն	4.5 մլն	4.8 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

**2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ**

Ձորամուտ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 70%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- . ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
  - . բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
  - . ֆինանսի բացակայությունը
- Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝
- . ֆինանսական սղությունը,

2) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են և համայնքային, և ծնողական ներդրումների դժվարությունները:

3) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը, .

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

. գազաֆիկացման բացակայությունը

5) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

6) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

. ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը:

9) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

10) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ցանցի բացակայությունը,

.գյուղտեխնիկայի մաշվածությունը

.որակյալ սերմի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

11) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացման դժվարությունները,

12) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

13) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

14) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը

15) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

16) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

17) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

## 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը ՎՀ սահմանին և հանրապետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղուն )
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնությունը
- Բնակավայրին հարակից անտառամերձ գոտու առկայությունը
- Համայնքում միջնակարգ դպրոցի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և համեմատաբար լավ վիճակը :

### ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքապետարանի շենքի և համայնքային կենտրոնի բացակայությունը
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը
- Մշակույթի տան դահլիճի անբարեկարգ վիճակի և կահավորման բացակայությունը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- Համայնքի գյուղապետարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Արոտավայրերի պակաս լինելը և վարելահողերի չմշակելը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը

- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Մանկապարտեզի բացակայությունը
- Բնակչության հոգևոր կարիքների բավարարմանը չնպաստելը/ եկեղեցու կամ մատուռի բացակայությունը/

### 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

#### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

#### 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:



- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կազմակերպել համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեությունը:  
Կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը:
- 9) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 10) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 11) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 12) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 14) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 15) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 18) Բարեգործությունը խթանել համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

#### 4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից

- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

## 5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

### Ծրագիր 1

**Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**

(Ոլորտի անվանումը)

**Ներհամայնքային Ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում**

(Ծրագրի անվանումը)

**Ձորամուտի համայնքապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 1,5 մլն դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում
  Սպասարկում
  Ընթացիկ աշխատանքներ
  Վերանորոգում
  Վերականգնում
  Ընդլայնում
  Փոխարինում
  Նորը
 Այլ

### **Ծրագրի հիմնավորումը**

Ներհամայնքային փողոցները և ճանապարհները հազեցած չեն արտաքին լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2017թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցը /0.8 կմ/ անհրաժեշտ է վերազինել արտաքին լուսավորության համակարգով:

### **Ծրագրի նպատակները**

Բարձրացնել ներհամայնքային կենտրոնական փողոցով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով այն լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

### **Ծրագրի խնդիրները**

1. Ծրագիրը իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:
2. Համագործակցել և կնքել պայմանագիր <Հայաստանի էլեկտրացանցեր> ՓԲԸ Տաշիրի մասնաճյուղի հետ՝ տրամադրելու փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական (տեխնիկական) խումբ:
3. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի լուսային սարքավորումներ և էլեկտրահաղորդալարեր:
4. Իրականացնել ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2017թ. հուլիսի 1-ը՝ այն հանձնել շահագործման:
5. **Շարունակել աշխատանքները մնացած փողոցների համար 2017-2021թթ. ընթացքում՝ հատկացնելով տարեկան 300.0 հազար դրամ:**

### **Ծրագրի ակնկալվող արդյունքները**

- 2017թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական 1-ին փողոցում կանցկացվի արտաքին լուսավորության համակարգ՝ 0.8 կմ երկարությամբ,
- այդ փողոցը կդառնա լուսավոր, անվտանգ ու գեղեցիկ՝ ինչպես համայնքի բնակիչների ու տրանսպորտային միջոցների, այնպես էլ համայնքում հյուրնկալվող զբոսաշրջիկների համար,
- ձեռք կբերվի համապատասխան փորձ, որի հիման վրա հետագա տարիներին կնախատեսվեն և կիրականացվեն ներհամայնքային մնացած փողոցների արտաքին լուսավորության համակարգերի անցկացման աշխատանքները:

### **Կապը այլ ծրագրերի հետ**

Ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման ծրագրի իրականացումն անմիջական կապի մեջ է գտնվում այդ փողոցների վերանորոգման և բարեկարգման ծրագրերի իրականացման հետ: Ներհամայնքային փողոցների միայն պատշաճ մակարդակով բարեկարգումից հետո իմաստ կունենա դրանց արտաքին լուսավորության համակարգերի անցկացումը, հակառակ դեպքում ներհամայնքային փողոցները չեն ստանա ամբողջական գեղեցիկ ու գրավիչ տեսք:

## **Ծրագիր 2**

### **Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն**

(Ոլորտի անվանումը)  
**Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում**  
(Օրագրի անվանումը)  
**Համայնքապետարան**

(Օրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Օրագրի ընդհանուր արժեքը՝** 3.5 մլն դրամ

**Օրագրի տեսակը կամ գնվող ապրանքը**

- Օտարությունների մատուցում  Սպասարկում  Ընթացիկ աշխատանքներ  
 **Վերանորոգում**  Վերականգնում  Ընդլայնում  Փոխարինում  Նորը  Այլ

**Օրագրի հիմնավորումը**

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 7 կմ, որից մայրուղուց մինչև գյուղ տանող ճանապարհի 1 կմ-ոց հատվածը ասֆալտապատվել է խորհրդային ժամանակներում՝ պետության կողմից և ունի վերանորոգման կարիք: Մնացած 6 կմ-ոց մասը կազմում են ներհամայնքային փողոցները, որոնք նույնպես կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքում շահագործվում են 23 մարդատար և 3 բեռնատար մասնավոր ավտոմեքենաներ, որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար:

**Օրագրի նպատակները**

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

**Օրագրի խնդիրները**

1. Ներհամայնքային փողոցների հողային, խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017-2021թթ. ընթացքում:
2. Համայնքի 2017-21թթ. բյուջեներում նախատեսել 700.0 - հազարական դրամ գումար՝ վերանորոգելու տարեկան 7 կմ երկարությամբ ներհամայնքային կենտրոնական փողոցներ:
3. Մինչև 2017-21թթ. յուրաքանչյուր տարվա հունիսի 10-ը նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և վարձակալել մասնավոր բեռնատար ավտոմեքենաներ՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:
4. Մինչև 2017-21թթ. յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները՝ այդ նպատակով տարեկան հատկացնելով 700.0 հազար դրամ:

**Օրագրի ակնկալվող արդյունքները**

- 2017-21թթ. ընթացքում համայնքում կվերանորոգվեն և կբարեկարգվեն ներհամայնքային փողոցների 7 կմ երկարությամբ հատվածներ,

- այդ փողոցներում կվերանան ջրափոսերը, դրանք կդառնան անցանելի ու հարմարավետ ինչպես տրանսպորտային միջոցների, այնպես էլ հետիոտների երթևեկության համար՝ տարվա բոլոր եղանակներին:

**Կապը այլ ծրագրերի հետ**

Ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման ծրագիրն անմիջական կապի մեջ է գտնվում այդ փողոցներում արտաքին լուսավորման համակարգի անցկացման ծրագրի հետ: Ներհամայնքային փողոցների միայն բարեկարգումից հետո հնարավոր կլինի իրականացնել դրանց արտաքին լուսավորման համակարգի անցկացումը:

**Ծրագիր 3**

**Տնտեսական հարաբերություններ. Ջերմամատակարարում**

(Ոլորտի անվանումը)

**Համայնքի գազաֆիկացում**

(Ծրագրի անվանումը)

**Համայնքապետարան**

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝** 30 մլն դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը**

- Ծառայությունների մատուցում  Սպասարկում  Ընթացիկ աշխատանքներ  **Գույքի ձեռքբերում**  
 Վերանորոգում  Վերականգնում  Ընդլայնում  Փոխարինում  **Նորը**  Այլ

**Ծրագրի հիմնավորումը**

Համայնքի բնակչությունը ջեռուցման հարցը լուծում է վառելիքայտի և աթարի միջոցով: Վառելիքայտի ձեռք բերումը կապված է մեծ դժվարությունների հետ, իսկ ավանդական մեթոդի կիրառումը՝ ոչ ժամանակակից: Անհրաժեշտություն է առաջացել գազաֆիկացնել համայնքը:

2014թ. անցկացվեց գազատար մինչև երկու գյուղերի սկիզբը: 2017-18 թթ. ընթացքում նախատեսվում է պետության, համայնքի, ՄԱԿ-ի և <Ռուսգազարդ - Հայաստան> ՓԲԸ համագործակցության շրջանակներում համայնքում անցկացնել գազամատակարարման ներհամայնքային համակարգի երկարությունը 5կմ է՝ գազի մատակարարումը հասցնելով նաև դպրոց:

**Ծրագրի նպատակները**

Բարելավել համայնքի բնակչության կենցաղային պայմանները՝ անցկացնելով ջեռուցման ներտնտեսային նոր համակարգեր

**Ծրագիր 4**

**Տնտեսական հարաբերություններ. քաղաքաշինություն**

(Ոլորտի անվանումը)

## Մշակույթի տան դահլիճի վերանորոգում

(Օրագրի անվանումը)

### Ձորամուտի համայնքապետարան

(Օրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Օրագրի ընդհանուր արժեքը՝ 2 մլն դրամ

#### Օրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում  Սպասարկում  Ընթացիկ աշխատանքներ  
 Վերանորոգում  Վերականգնում  Ընդլայնում  Փոխարինում  **Նորը**  Այլ

#### Օրագրի հիմնավորումը

Բնակչության մշակութային կյանքը, կարելի է ասել, սառեցված վիճակում է: Անհրաժեշտ է վերանորոգել մշակույթի տան դահլիճը, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել և անցկացնել հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ:

#### Օրագրի նպատակները

Աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:

#### Օրագրի խնդիրները

1. Կազմել դահլիճի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
2. Դիմել մարզպետարան 1.5 մլն դրամ պետական միջոցներից հատկացում անելու հարցով:
3. Համայնքի բյուջեից 0.5 մլն դրամ հատկացնել վերանորոգման համար:



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«ՁՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ »**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքի պահպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Բարեկարգ ճանապարհներ և վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բարեկարգ ճանապարհի ավելացում քառ. մետր		1200	2000	2200	2500	3000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ջրհեռացման առուներ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված ջրհեռացման առուների ավելացում գմ		100	150	300	300	350
	2. Բարեկարգ ճանապարհ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Շեքենապատ ճանապարհների ավելացում քառ.մետր	0	1200	2000	2200	2500	3000	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 1.2 ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 ճանապարհների շեքենապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 3 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3.5մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. ֆինանսական միջոցների առկայություն 2. շեքենի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անձրևներ , սելավներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ						



Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային կենտրոնական փողոցները կբերվեն բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:
-------------------------------	--

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՁՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աղբահանություն և սանիտարական մաքրում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի տարածքից աղբի լիարժեք հեռացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Աղբահանության իրականացումը համայնքում, %-ներով	2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում աղբահանության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Աղբահանության բնագավառում մասնակցող տնային տնտեսությունների ան	2016	2017	2018	2019	2020	2021
	0	30	50	70	90	90	90
	2. Աղբահանության կազմակերպման կոպտորայի ձևավորում բնակչության մոտ						
<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
Կոպտորական աղբահանության մասնակցող բնակիչների ան	2016	2017	2018	2019	2020	2021	
0	90	150	250	300	300	300	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Աղբահանության կազմակերպման գործում բնակիչների համար դասընթացների կազմակերպում: 1.2. Համայնքի տարածքում աղբահարթակների և աղբամանների տեղադրում : 1,3 Բնակիչներից աղբահանության վճարի գանձում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5մլն դրամ Կապիտալ ծախսեր 1 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1.5 մլն.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցներ տրամադրող կազմակերպության առկայություն						

Ծրագրի հիմնական ոլակերը	1.Կենտոնացված աղբավայրի չլինելու խնդիրը 2.Բնակիչների ոչ շահագրգիռ մոտեցումը
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն ,համայնք,
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է Ձորամուտ համայնքի տարածքում տեղադրել աղբամաններ, շաբաթական ,կամ երկու շաբաթը մեկ անգամ աղբամանների պարունակության տեղափոխում: Շաբաթօրյակների միջոցով համայնքի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում:Հսկողության իրականացում շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու համար:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրի կառուցապատունը և բարեկարգումը					
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Փողոցային լուսավորության կետերի ավելացում	0	20	30	40	50	60
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Լուսավորման կետերի ավելացում					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Լուսամփոփների, հաղորդալարերի և հենասյուներ ձեռք բերում/ հատ/	0	20	30	40	50	60
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 լուսամփոփների ձեռք բերում 1.2 հաղորդալարերի ձեռք բերում 1.3 հենասյուների ձեռք բերում 1.4 փողոցային լուսամփոփների տեղադրում					
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 300հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 1,2մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝1,5մլն.դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2,Աշխատանքների կատարման պատրաստակամություն 3,Հենասյուների որոշակի քանակի առկայություն					
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան					
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք,					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում Ձորամուտ համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք :					

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ԶՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ	Բարելավել բնակչության կենցաղային պայմանները						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Համայնքի ներսում գազատար խողովակների անցկացում /գծ.մ/	0	2500	2500	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.գազատարի նախագիծ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված Նախագիծ	1	0	0	0	0	0
	1. գազատարի կառուցում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
Կառուցված գազատար՝ մետր	0	2500	2500	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 1.2 ֆինանսական միջոցների հայթայթում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 մրցույթի հայտարարում 2.1 գազատարի կառուցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 30 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30.5 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ	1.Ֆինանս տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2.բնակչության ցանկություն						

ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ոլիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բնակչությունը կանցնի ներտնտեսային նոր համակարգի, կբարելավվի կենցաղային պայմանները:

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### « ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԶՈՐԱՄՈՒՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում					
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ%-ով	0	10	15	30	40
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	10	20	30	40
2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկայի ունենալը						
	Ելակետային	Թիրախային արժեքներ				

	Ցուցանիշներ	արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
	Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	20	30			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 դաշնաթացների կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2 Խոտհավաք մամլիչի ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1.2 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 6 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 7.2 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցներ տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2.Համայնքում կոոպերատիվի առկայություն 3.մշակվող վարելահողերի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ- 2019թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է կոոպերատիվային շարժման դերի բարձրացում, բնակչության եկամուտները կավելանան 20% և ավելի::						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**« ԶՈՐԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ »**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի տան շենքում ունենալ բարվոք դահլիճ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Վերանորոգված դահլիճի առկայություն	0	0	1	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Դահլիճի վերանորոգման նախագիծ ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված Նախագիծ	1	0	0	0	0	0
	2. Վերանորոգված դահլիճ						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
Դահլիճի վերանորոգում	0		1	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 անհրաժեշտ նյութերի ձեռք բերում 2.2 դահլիճի վերանորոգում						

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 1.5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 մլն դրամ.
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1.Ֆինանսական միջոցների առկայություն 2,Նախագծի առկայությունը
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ռիսկեր չկան
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ- 2018թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է համյնքային սեփականության մշակույթի շենքում դահլիճի վերանորոգում:







<p>8. Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը</p>	1.5	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.5		1
<p>9. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</p>	7.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	3.5		4
<p>10. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>12. Գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>14. Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանում</p>	0	0	0	0	0	0	0	0	0
<p>15. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում</p>	0,5	0,1	0,1	0,1	0,1	0,1	0,5	0	0

0	0	0	0.5	1 մասնակի	0	0			
			3.5	4 մասնակի					
0	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0	0	0	0	0	0	0
			0	0					0
0	0	0	0	0	0	0	0	0	0
0	0	0	0,5	առկա է					













Համայնքում Ցնցիլության ան նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0																		X	ՔՎԿԳ բաժին	Հարցում
3 և ավելի երկնամեղ ունեցող ընտանիքների և՛ նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0	0.1%			0.2%				0.3%										X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
<b>17. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում</b>																					
Ոչ վատնվող հիվանդությունների հիվանդացության նվազում նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսներով	0																		X	Համայնքապետարան, համայնքապետարանի ենթակայության բժշկական հաստատություններ	Փաստաթղթային ուսումնասիրություն կամ հարցում
Համայնքային ենթակառուցվածքի բնական հիմնարկի կորուստի պայմաններում բացակայող հարկերի և այլ տեսակի հարկերի նվազում նախորդ տարվա համեմատ	0	0			0				0										X	Բժշկական հաստատություններ	Հարցում կամ հարցազրույց
<b>18. Համայնքային հասարակական կյանքին հաշվառման մասնակցության խթանում</b>																					
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցի են հաշվառվում ունեցող անձի (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս)	0	0	0		10%			15%											X	Հաշվառվածներին ունեցող անձից	Համայնքի հարցազրույց/Ֆոկուս խումբ
Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումների մասնակցած հաշվառվածներին ունեցող անձանց թվի (որպես հաշվառվածներին ունեցող անձանց տոկոս)	0	0			20%			30%											X	Հաշվառվածներին ունեցող անձից	Համայնքի հարցազրույց/Ֆոկուս խումբ
<b>19. Բարեգործության խթանում</b>																					
Բարեգործական նպատակներով հանգանակված գումար հաշվարկված որպես համայնքի սեփական նվաճումների տոկոս	0				0.1%				0.2%										X	Համայնքապետարան/բարեգործական կազմակերպություն	Հարցում կամ հարցազրույց
Համայնքի կրթիչ կազմակերպված բարեգործական միջոցառումների քանակ	0		2					2											X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն